

«ՎԱՐՅՐ ԴՐԵՔ ՁԵՐ ԴԻՄԱԿՆԵՐԸ»

Posted on March 1, 2019 by Keghart



Category: [Opinions](#)



ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՐՄՈՐԵՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ ՀԱՅ ՔԱԶԱՐԻ ԲԱՆԱԿԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՌՎԱՀՈՒՅՁ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵՐՈՒՄ

Համո Մոսկոֆյան, Բեյրութ-Գամիշլի-Դամասկոս-Մեմբիջ (Հեռախոսով), 21 Փետրուար 2019

Լիբանանի քաղաքացիական պատերազմի դժնդակ օրերին, երբ հարձակման ենթարկվեցին նաև Բեյրութի հայկական թաղամասերը, զոհեր և ավերածություններ պատճառելով 1979-ին՝ «Կեմի Դեյվիդ»յան օրերին՝ Մայր Հայրենիքի ժողովուրդը, Երևանից՝ Մոսկվա, զանգվածային ցույցեր կատարեց ի պաշտպանություն «Սփյուռքի մայրաքաղաք»ի: Լիբանանի ֆաշիստական ուժերին զգուշացման հեռագիր ուղարկվեց նույնիսկ Լեոնիդ Բրեժնևի կողմից: Միաժամանակ, Սփյուռքահայ Մշակութային Կոմիտեի և Լիբանանում Սովետական դեսպանատան հայազգի դիվանագետների կազմակերպությամբ, գլխավորաբար անձնուրաց Ռոմեն Կոզմոյանի ջանքերով՝ Լիբանանի հայությանը հսկայական մարդասիրական օգնություն բաժանվեց, այն օրերի միաբան ու քաջարի հայ գաղթօջախի բոլոր ուժերին: Անշուշտ, լիբանանահայ գաղթօջախը, 1988 թ.ի Լենինականի և Սպիտակի ահավոր երկրաշարժի օրերին, իրենց սիրիահայ եղբայրներին և քույրերին հետ, ունեցած բոլոր կարելի միջոցներով օգտակար դարձան աղիտյալներին:



Այսպիսի պատմական իրադարձություններից 40 տարի ետք, քաղաքացիական թե համաշխարհային 3-րդ Պատերազմի (ինչպես կոչում են արհավիրքից վերապրած սիրիացիները) աննկարագրելի ավերածությունների մեջ ապրած սիրիահայերը, անսպասելի բարոյական ու քաղաքական, ազգային անվտանգության պահպանման օգնության քայլի ականատես եղան...Մայր Հայրենիքի քաջարի 83 բանակայինների ու մասնագետների կողմից:

ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՐՄՈՐԵՆ ՈՂՋՈՒՆՈՒՄ ԵՆ ՀԱՅ ՔԱԶԱՐԻ ԲԱՆԱԿԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՌՎԱՀՈՒՅՁ ՄԻՋԻՆ ԱՐԵՎԵԼԵՐՈՒՄ

Համո Մոսկոֆյան, Բեյրութ-Գամիշլի-Դամասկոս-Մեմբիջ (Հեռախոսով), 21 Փետրուար 2019

Լիբանանի քաղաքացիական պատերազմի դժնդակ օրերին, երբ հարձակման ենթարկվեցին նաև Բեյրութի հայկական թաղամասերը, զոհեր և ավերածություններ պատճառելով 1979-ին՝ «Կեմի Դեյվիդ»յան օրերին՝ Մայր Հայրենիքի ժողովուրդը, Երևանից՝ Մոսկվա, զանգվածային ցույցեր կատարեց ի պաշտպանություն «Սփյուռքի մայրաքաղաք»ի: Լիբանանի ֆաշիստական ուժերին զգուշացման հեռագիր ուղարկվեց

Նույնիսքն Լեոնիդ Բրեժնևի կողմից: Միաժամանակ, Սփյուռքահայ Մշակութային Կոմիտեի և Լիբանանում Սովետական դեսպանատան հայազգի դիվանագետների կազմակերպությամբ, գլխավորաբար անձնուրաց Ռոմեն Կոզմոյանի ջանքերով՝ Լիբանանի հայությանը հսկայական մարդասիրական օգնություն բաժանվեց, այն օրերի միաբան ու քաջարի հայ գաղթօջախի բոլոր ուժերին: Անշուշտ, լիբանանահայ գաղթօջախը, 1988 թ.ի Լենինականի և Սպիտակի ահավոր երկրաշարժի օրերին, իրենց սիրիահայ եղբայրներին և քույրերին հետ, ունեցած բոլոր կարելի միջոցներով օգտակար դարձան աղիտյալներին:



Այսպիսի պատմական իրադարձություններից 40 տարի ետք, քաղաքացիական թե համաշխարհային 3-րդ Պատերազմի (ինչպես կոչում են արհավիրքից վերապրած սիրիացիները) աննկարագրելի ավերածությունների մեջ ապրած սիրիահայերը, անսպասելի բարոյական ու քաղաքական, ազգային անվտանգության պահպանման օգնության քայլի ականատես եղան...Մայր Հայրենիքի քաջարի 83 բանակայինների ու մասնագետների կողմից:

Մի երկիր, ուր 85 երկրներից, գլխավորաբար Թուրքիայի և ԱՄՆ-ի, Եվրոպայի և Արաբական Ծոցի երկրների կողմից ֆինանսավորված մերօրյա «Բեն-Լադեն»ները, հանձինս Ալ-Բադդադիի և այլ ոճրապետ-ցեղասպանների քարուքանդ արեցին երբեմնի ինքնաբավ և ծաղկուն երկիրը, սիրիահայ փառավոր գաղթօջախը, որտեղ 406 թ.-ին Ալ-Ջեզիրայի Սուլմախաթ-Շամոշադ քաղաքում Մեծն Մեսրոպ Մաշտոցը հայ գիրերի գյուտն էր կատարել, ապրում էր մշակութային ու տնտեսական աննախընթաց ծաղկման պայմաններում: 1946-47-ին և 1963-64 թթ. և մինչև այսօր, Հայոց Ցեղասպանության վերապրողների սերունդները, ներգաղթեցին Հայաստան, իրենց հսկայական ներդրումը բերելով կյանքի բոլոր բնագավառներում: Վերջերս, Հյուսիսային Սիրիա կատարած մեր ճանապարհորդությունների ընթացքում, ականատես եղանք թե Գամիշլիի, Քոբանիի, Ալ-Հասաբեի և այլ շրջանների հայերը ինչպիսի մեծ հարգանք են վայելում ասորիների, քրդերի, եզիդիների և արաբների մոտ: Ըստ ռազմա-քաղաքական ղեկավարներ Սալիհ Մուսլիմի (PHD), «Հովրո» Գինո Կապրիելի, Ակկաց Հաննայի, Աբդ Ալ-Քարիմ Օմարի վկայություններին, «Իսլամական Պետության» ճիրաններից առաջինը ազատագրել են հայ եկեղեցիներն ու բնակավայրերը Թել-Աբիադի, Տիրիքի, Քոբանիի (Այն Արաբ), Մենբիջի և այլուր:

Մինչ Սիրիայի նախագահ Բաշշար Ասադը հայտարարում էր որ հիմնապես կվերակառուցի Հայոց Ցեղասպանության հուշակոթողները Սիրիայում, ապա և «պատասխան»ը գալիս էր Թուրքիայի վարձկանների կողմից՝ վերջերս ազատագրված հայկական Քեսաբի հրթիռակոծմամբ: Իսկ ամենից վրդովեցուցիչն է՝ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության տարածած հայտարարությունը, որտեղ ընդդիմանում էր հայկական սակրավորների ու ռազմական անվտանգության 85 հոգանոց ջոկատի

(«Կոնստիտուցիոնալ») առաքումը Սիրիա, իբր թե նեցուկ կանգնելու «բռնատեր» Բաշար Ասադի վարչակարգին...: Անշուշտ, Երևանի գեղատեսիլ վայրում, Երևանյան լճի և հավերժական Արարատի մոտիկ կանգնած ԱՄՆ-ի դեսպանության «քաղաքագետ»ները, չէին հիշում թե՛ ինչպես հանգուցյալ սենատոր, ԱՄՆ-ի նախագահական ընտրությունների ձախողած թեկնածու Ջոն Մըկկեյնը, Իրաքի և Սիրիայի անապատներում, ջերմագին լուսանկար էր ուղարկում, քաղցր ժպիտներով, 21-րդ դարի ամենից արյունախում ահաբեկիչների, «Իսլամական Պետության» “խալիֆա” Բադդադիի հետ... կամ թե ինչպես մի քանի հազար նահատակներ զոհաբերած քրդական և ասորական, արաբական «Դեմոկրատական Սիրիայի» 60,000-անոց բանակը, անպաշտպան լքվում է՝ նախագահ Թրամփի հեռախոսազրույցից հետո, Թուրքիայի բռնատեր Էրդողանի հետ:

Կարծես այս բոլորը բավարար չէր, այս անգամ Սուլթանիթի և Բաքվի հայկական նորագույն ցեղասպանությանց զոհերի հիշատակի վրա «թքած», ազերի «Թուրան» և «ազերնյուզ»ի հարցազրույցներ շնորհած Տիգրան «Խըզմալօղլուն», քննադատում է հերոս սիրիահայությանը օգնության փութացող հայկական բանակի քաջարի որդիները: Իսկ Հայոց Ցեղասպանության գողգորթայով անցած, Սիրիայում փրկված, Լիբանանում արմատներ գցած Սեֆիյանների որդին՝ Ժիրայր Սեֆիյանը, «Սասնա Ճռերով», հակա-ռուսական քարոզչությամբ կուրացած, նույնպես իր մերժումն է հայտնում սիրիահայերին օգնության ձեռք մեկնած հայոց խիզախ բանակի որոշմանը: Մինչ այդ՝ այս բոլորը, երբ Ռուսաստանը հայկական ռազմաօդային ուժերին զինում է, 100 միլիոն դոլար վարկ էլ տրամադրելով, «Սու 30 ՍՄ» լավագույն կործանիչներով, հանձնելով նաև ծրիաբար, «Իսկենդեր» կործանիչ հրթիռներ (3 համակարգ) և «Էս 300» զենիթային հրթիռների 3 համակարգեր: Ջոն Բոլթոնը ցինիկաբար Հայաստանին առաջարկում էր վաճառել ամերիկյան զինատեսակներ, որոնք կարող են գնել միայն Ադրբեյջանի «փեթրոդոլարները»:

Այս բոլորից հետո, հարցնում ենք մեր պայծառափա՛յլ ու նորելուկ քաղաքագետներին, ինքնակոչ «փրկիչ»ներին, ԱՄՆ երբեմնի նախագահի հետևողությամբ... Եթե հայրենասերներ եք, ցույց տվեք այն, իսկ եթե ծառայում եք ինչ որ «հայտնի» թե «գաղտնի» շրջանակների, ապա և վայր դրեք ձեր դիմակները ու փորձեցեք փրկել Հայաստանն ու հայ ժողովուրդը:

